

տեղի ունեցած կը համարել «ի վերնաստանն ապարանից»: Ուստի եւ կրնանք հաստատել, թէ հեթանոս հայը պատահարով չէ որ ընտրած է Լէզքի բարձրագիւր ժայռն իբր պաշտօնատեղի արալէզ աստուածներու: Այդ լեռնաձեւ ժայռի վրայ կ'իյնար նորաձագ արեւուն առաջին եւ կենսախայտ ճառագայթը. ցորեկուան ընթացքին ո՛չ մէկ վայրկեան դուրկ կը մնար ժայռն արեւու կենսատու ջերմութենէն, եւ իրիկնադէմին, երբ շրջակայքի տարածութիւնը գիշերուան ստուերներով պարփակուէր, տակաւին բեկբեկ ու նուաղկոտ ճառագայթ մը կը դողար կենսատու շներու ժայռին գլխուն վրայ: Արդ, հեթանոս հայը չէր կրնար չընտրել նոյն ժայռն իբր պաշտօնատեղի արալէզներու, քանի որ ան ամբողջ ցորեկուան ընթացքին արեւու աչքին եւ խնամքին ներքեւ կը մնար: Հոս աւելորդ է՛ր լայր յիշել, թէ Կարբեղոնի մէջ Ասկլէպիոս¹¹⁷ տաճար մ'ունէր սեպ բարձունքի մը վրայ, ուր կարելի էր ելլել վաթսուն աստիճաններով սանդուխի մը միջնորդութեամբ:

Ինչպէս կը տեսնուի, արալէզներու քննութիւնը հոս մենագրութեան մը հանգամանքն առաւ. եւ թերեւս ընթերցողներէս ոմանք ասոր համար իրենց տհաճութիւնն յայտնեն, ըսելով թէ նիւթէս դուրս մեծ շեղում մ'ըրած ըլլամ: Սակայն առանց մասնաւոր դիտարկութեան չէ, որ արալէզներու վրայ յատուկ ուշադրութեամբ աշխատեցայ: Նախ որ Եդնիկի ընձեռած հում նիւթն ուրիշ հեղինակներու պարունակած գրեթէ ամբողջ աստղծն ու տեսագծերը կը բովանդակէ. այնպէս որ եթէ գիցարան կրօնախոյզը երբեք արալէզներու հարցին մենագրութիւն մ'ուզէր նուիրել, ամէնէն առաջ Եդնիկի հում նիւթը նկատողութեան պիտի առնէր: Ահա ես ըրի այդ: Երկրորդ, ես հարցը բոլորովին նոր տեսակէտներով ներկայացուցի. ուստի եւ ստիպուեցայ խնդիրն իր ամբողջ յարակից պարագաներով պարզել, որպէս զի պայծառ հասկացողութիւն մը ստանան արալէզներու հարցով զբաղողները:

Եթէ ամբողջով ուզենք արալէզներու հարցին նուիրուած մեր քննութիւններուն արդիւնքը, հետեւեալները կ'ունենանք.

¹¹⁷ Baudissin, Der phönizische Gott Esmun, WZKM, LIX, 1905, էջ 176:

Արալէզ բառը կրնայ՝ ա. Արալի լիզող նշանակել եւ իբր այդպիսի չի կրնար սկզբնական բառ մ'ըլլալ: Բ. Սկզբնական ձեւը կը համարիմ Լէզք, որուն կցուած է յետոյ Արա անունը: Այդ սկզբնական Լէզք անունը պահուած է մինչեւ այսօր Վանի Լէզք գիւղին մէջ, որ արալէզներու պաշտամունքի կենդրոն եղած է՝ համաձայն գրական եւ ժողովրդական աւանդութիւններու եւ հաւատարմութիւններու:

«Յարալէզ» ձեւը չի կրնար հին ըլլալ: Եդնիկի համեմատ «առլեզն ի շանէ» է, որուն մասին ժողովուրդը կը համարէր, թէ «ընդ աներեւոյթ դորութիւնս ինչ կեցցէ»: Արալէզները պատերազմի մէջ ինկած վիրաւորները լիզելով կ'ողջնցնէին:

Ուրիշ մատենագիրներ ալ կը հաստատեն Եդնիկի ըսածները եւ նորանոր ճոխացումներ կ'ընձեռեն. վիրաւորուած գիւցաղներն մարմինն աշտարակի մը տանիքը կը դրուի, կամ «ի վերնատունն»: Արալէզները վերէն (երկրնքէն) հոն կ'իջնեն, մարմինը լիզելով ողջնցընելու եւ կենդանացնելու համար: Հաւանաբար արալէզներու թիւը երկու էր. մին սեւ եւ միւսն սպիտակ: Այդ սեւ եւ սպիտակ արալէզները կը յիշէ արդէն Վանական վարդապետ, իբրեւ Արտաւազդ թագաւորի երկու շները՝ «Սեաւ եւ Սպիտակ», որ յար լիզողուն գիւցաղնս նորա»:

Արալէզներն իրենց էութեամբ բարի ոգիներ են, եւ սկզբնապէս մեռելները կենդանացնելու գերով աչքի կը զարնէին: Այդ սկզբնական շրջանին անոնք արիւտ եւ լուսնոյ հետ կը նոյնանային որոնք համաշխարհային գիցարանութեան մէջ յատկապէս կեանքի եւ մահուան հետ կապ ունին: Սպիտակ արալէզը¹¹⁸ կը ներկայացնէ արիւ-

¹¹⁸ Թերեւս այս հարցին հետ կապ ունի Սանատրուկի աւանդութիւնը, զոր Սորենացի կը յիշէ. «Նորահրաշ սպիտակ շուն» մը ձիւնի տակ մնացած գայեակն ու մանուկը կը պահպանէ, աստուածներու զրդուամով: Բնական է, առանց այդ սպիտակ շան միջամտութեան, պիտի մեռնէին երկուքն ալ: Դէպքն այսպէս կը պատմէ Սորենացի. «Բայց թէ ընդէ՛ր Սանատրուկի կոչեցաւ, ասելի է: Քանզի յաւուր ձմեռայնոյ ճանապարհորդեալ ի Հայս քոյր Արգարու Օդէ, պատահէ բոյ ի լերին Կորդուաց. ցրուեաց դամենեւ սեան մրբիկ, մինչ ոչ գիտելով ընկեր զընկեր՝ ընդ ո՛ր վարեցաւ: Իսկ գայեակին նորա Սանատայ... առեալ զմանուկն, քանզի տղա էր, եզ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն գերիս տիւս եւ գերիս գիշերս: Զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ՝ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն: Բայց որչափ եղաք վերահասու, այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրական լեալ, պատահեաց մանկանն եւ գայեակին», Բ. ԼԶ:

կեանքը եւ իբր այդպիսի յարութիւն կու տայ. մինչ սեւ արալէզը մահ(մահիկ) լուսնի հետ կը նոյնանայ, մեռելի հոգին կը պաշտպանէ հոգեհոտներու դէմ, անոր առաջնորդ կ'ըլլայ դէպ ի մեռելներու աշխարհը: Այս վերջին տեսակէտէն ծագած է անշուշտ այն հաւատարիքը, թէ շան ոռնոցը մօտալուստ մատարիքը, թէ շան ոռնոցը մօտալուստ մահուան մը նշան է: Եւ ահա ասիկց այդ բարի ոգիներուն վրայ կու գայ չար տեսագիծ մը, որ թէեւ շատ տարածուած է, բայց սկզբնական շրջանի մը չի վերաբերիր:

Մեր արալէզները շատ հեղինակներու կողմանէ՝ օտար գիցարանութիւններու համապատասխան աստուածութիւններու հետ համեմատուած են: Բասմաշեան¹¹⁹ զանոնք համեմատուած են հետ կ'ուզէ նոյնացնել Մարդուկի 4 շներուն հետ կ'ուզէ նոյնացնել եւ նոյն իսկ կը պնդէ, որ «Ասորբարբելացոց Մարդուկն իւր հետեւորդ շներով անցած է Հայոց»: Կարծեկից չենք կրնար ըլլալ Բասմաշեանի: Արալէզներու հաւատարմութիւն ընդհանուր գծերով՝ բազմաթիւ ազգերու ստացուածք է. բայց իր մանրամասնութիւններուն մէջ դուրս հայկական է եւ իբր այդ՝ պէտք է գնահատուի:

Արդի հայ ժողովրդական աւանդութիւններն ալ կը պատմեն լիզելով յարութիւն եւ առողջութիւն պարգեւող շնաստուածներու մասին: Այս աւանդութիւնը յատկապէս կապուած է Լէզք գիւղի Ամենափրկիչ մատրան հետ, որ նախապէս արալէզներու սրբալայր մըն էր, ուր վիրաւորուած եւ անկենդան մարմինները կը բերուէին, կենդանութիւն ստանալու յուսով: Լէզքի աւանդութիւնը ստանալու յուսով: Լէզքի արալէզներու թիւ մասնաւոր կը պատմէ Արայի յարութեան դէպքով, իսկ արդի աւանդութիւնները թէ՛ Արայի յարութիւնն եւ թէ՛ այլ բազմաթիւ վերականգնացումներ կ'ընդունի: Շունը թէ՛ բարի եւ թէ՛ չար տեսագծերով երեւան կու գայ. առաջին պարագային՝ կը տրամի, երբ հոգեհոտներու մերձեանքը տեսնէ մէկը մեռցնելու համար. իսկ երկրորդ պարագային՝ հոգեհոտներու ստտար կը հանդիսանայ, վասն զի իր ոռնոցը մահապուշակ եւ մահատիթ կը նկատուի:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

¹¹⁹ Համա. Իսկական Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս 1914, էջ 81:

ԹՈՂՈՎՐԳՈՒԿԱՆ ՀԵՔԻՆԹՆԵՐ

ԲԻԱՍՍՈՒՆ ԳԻՌՈՒՆ ԵՒ ԹԱԿԱՒՈՒՐՈՒ ԱՅԶԻԿ¹

Կ'էնի՛ կ'էնի՛ մէ՛խատ թակաւո՛ր ըմ. էտա թակաւուրուն իսկի՛ լաճ տղայ չէ՛նե, մէնայ մէ՛խատ արիւնջ մ՛ կ'էնի: Էտու թակաւուրուն նստած քիաղաք քիառսուն գիող կ'ինեն տիւս՝ ամիս տիր մ՛ կ'զանեն էտա քիաղքի վէրէն կ'թալնեն կ'տանեն: Թակաւուրն ըսկո՛ւմ կ'աղբիլտանայ, ըսկո՛ւմ կ'իւրդճանայ՝ որ էլ խօսքով չէ՛նէ. կ'էնի աւուր խացի կարօտ: Օ՛ր ըմ թակաւուրուն արիւնջ կ'խտոցուցի ուր խօր կ'ասի:

— «Թակաւո՛ր պ ա պ ա, ա շ ի ը իս իրես էլաճ հը՛մէն թակաւորներ զ ա ն գ ի ն են, մենք ինչի՞ ըսնա աղբիտ ենք, մեր թակաւուրութիւն ժողովուրթ ինչի՞ ըսը՛սկիւս իս՞ դճ, կարօ՛տ պիտի էլնի...»:

— «Աչի՛ ըս լիոս, կ'ասի թակաւոր ուր արիւնջան, հը՛մէն երկրի թակաւորներն էլ զ ա ն գ ի ն են, մենք էլ զ ա ն գ ի ն ինք, ապա Աստուած փորձայ՛ մի տե մե, է՛լ խօսքով չէ՛նէ: Է՛նա տեղ, քիաղքից տիւս, յէ՛ր ըմ կայ, էն յէրի մէ՛ջ քիառսուն գիող կայ, հը՛մէն ամսուն կուգիւան մեր քիաղաք կ'թալնեն կ'տանեն: Մըկա ժողովուրթ աղբիլտացե, էլ զառ չի՛ մնացե որ մե էլ տայ, մենք էլ աղբիլտացեր ենք: Թակաւոր ասածն ուր ժողովուրթի վէրէն ի որ ժողովուրթ աղբիտ էլնի՛ թակաւորն ի՛նչիս կանայ զ ա ն գ ի ն էլնե...»:

— «Թակաւո՛ր ասրած կէնա՛ս, կ'ասի արիւնջի. եոսունէլին արիւնջ տո՛ւ՛ զիկ իմ կերպարանքի նման, քիառսուն ծեռք էլ խալա մէ՛յ նմուշ էլնի. քիառսուն խատ էլ ուղտ՝ հըմէնի վէրէն քիառսուն զանգիւղ էլնի, ես էրթամ էն գիողբայց հախկէն գիամ»:

Արիւնջն ի՛նչիս որ կ'ասի՛ թակաւոր զը՛մէն էլ կ'պատրաստի: Արիւնջ կ'ասի. «Զի՛ խամար մէ՛խատ էլ խօրօտ թո՛ւր ըմ չինել տուր»: Խէր է՛ն էլ կ'անի: Արիւնջն ի, զանգիւղեր կ'կախի էտա քիառսուն ըղտերաց կառններ, եոսունէլին արիւնջեր կ'խէճուցի վէրի՛յտեր, արիւնջերաց կ'ասի.

— «Տիւք՝ էտա չիտայ ճամխից կնացէ՛ք մ ա զ ա ր է ն ընցէ՛ք է՛լմ տառցէ՛ք. զանգըկ ներ թօղ զըլղըրիւան՝ տիւք հա՛ կնացէ՛ք

¹ Վանայ բարբառով: Գրի տնտուած 1906 ին՝ ի վան:

ընդհանր շնորհիվ էն անխոզի գերողի ճիւղն էկաւ : Կէօ՛ ըստկնա կիշեր ցէրէկ էն գերողու ախը սիրան էր . «Չէնի՛ր գիւայ զիկ էսա տեղէն քիւշի տանի ըսպանի» : Ախշիյ թող մնայ ուր վախի մէջ, մենք գիւանք գերողուն, խենք է՞ն ինչ արաց :

Գիող եօթ տարի պտտաւ պտտաւ, ախշկան խեւ կան էկաւ, մէ՛յ տեղի մ՛ ու ալ ը ի մ՛ չառեց : Է՛լ մ՛ առաջաւ գելս Հնդստան կնաց Հնդու քիաղաք, կնաց մէ՛յ կ ա յ չ վ է մ՛ նստաւ : Քիանի ՚մ օր նսաւ, մէկ օր կա՛ն վաջուն խառցուց ասաց .

— «Ա՛խպէր, ես շա՛տ եմ իկե կնացե ըստա, ապա էսա թ ա ժ ա շէնք նո՛ր տէսայ, էսա պե՛տ ի ի՞նչ ի» : Վարպեան ասաց .

— «Կարի՛ճ, քիտ ասա՛ծն ի էտա նոր շի- նիցին . բա դ ը ր կ ի ա յ չ տեր մէկ ախշիկ ըմ պիրին խեա՛ ուրենց, թակաւուրու լաճն ա- ուեց, մըկա ընա քաղան իտուր քիաշել ուր սարի պիւլիոր» : Գիողն ուր մտքի մէջ ու- ըրախցաւ ասաց . «Կնդա՛յ իմ մարթ, էլ ծեռ- նէս չի փոթնե» : Էտա տեղէն էլաւ կնաց բա դ ՚ն ի չորս կողմ աշկէ ընցուց . էկաւ մօ՛ տարպին ասաց .

— «Ձի՛ խամար կանա՞ս խաղար խառ էրկթէ ցից շինե» : Բ ա դ ա ո արին խաղարն՝ խինգ խաղար կ ու ո ո ո շ ի . տարպին շինեց պոճաւ, իրիկուն որ էլաւ, մութ խե՛տ ինե- լուն՝ գիողն առեց էրկթէ ցցեր տարաւ բա դ ՚ն ի տակ . ցցի ծէր կուտէր պատին՝ ախով կ՛ղանէր վեր ցցի գիրլիտուն, կակուղ խողի մէջ էրթալու պէս կ՛էրթէր մէջ պա- տին : Հա՛ իզար հա՛ էլաւ, ցցերն իզար չ՛ուժ բա դ ՚ն ի գիրլէօխ էճաւ տակ . առճի տոան կան պախապայտեր ըսպանեց, ընցաւ էն մէկէլ բա դ ՚ն ին էլ ցից իզարկ, կան բա յ չ չ ի ք ըսպանեց . կառճ խօսքով՝ եօթ բա դ ա ն էնպէս ցից իզարկ ընցաւ, եօթ տոան պախապայտեր ըսպանեց, կնաց մտաւ սար էն ի՛նչկանդար ծառայ որ կէր զըմէյն էլ ըսպանեց, կնաց թակաւուրու լաճու պառ- կած էօ դ ՚ի տոան առաճ, տուռն իպաց մտաւ ներս : Ախշիյ կէօ՛ նստիւր էր մէջ տե- դաց, խեա որ գիրղերաց ճիւղ տէսաւ՝ թուա կոյնաւ . ասաց .

— «Աս՛ճու սիրուն էլինի, էսա խեղճ կարճին պան մ՛ա՛նե, մի՛ ըսպանե, քե ի՛նչ պան որ կայ խե՛ գի՛կ ի» :

— «Դէ՛ էլի արե խուէս» ասաց գիւղամ գիող . ախշիկ ուր իրիցն իթօղ մէջ ուր տե-

դաց քերնուկ՝ էլաւ ինկիւաւ գերողու խեւ կնացին . Կնացին բա դ ՚ն ի տակ, գիրողն ա- սաց ախշկան .

— «Արե՛ էլի՛ բա դ ՚ն ի ց վեր, ես էլ քիտ խուէն» :

— «Աստուճ քիտ խիմը քիա՛կի՛, ես կա- նա՛մ էն տեղէն էլնե, ասաց ախշիկ, առաճ տի՛ւ էլի, գիկ էլ քիաշի խե՛ քե» : Գիողն էլաւ բա դ ՚ն ի գիրլէօխ, ախշիյն էլ խեա . գիող էնդեճէն էրկու ցից էճէր էր՝ ախշիյն ասաց . «Կայնի՛ ես էլ էճնեմ» . ասելո՛ւն խեա ո՛ւշիյ մ՛ քիւրքի տկէն կէճակէ թուր քիա- շեց, մէյ խառ ամենայն գորութեամբ իզար գերողու վիզ կարեց, գիրլէօխ կնաց մէ՛յ գելս, ջ ա ն դ ա յ մէ՛յ գելս, ուր տեղէն կան- շեց քիաղքի պախապայտեր վաղիցին էկան տէսան, թակաւուրուն խաղար տարան . թա- կաւուր մարթ էօրէօխկեց, ախշիյն առին տայ բա դ ՚ն ի ց տարան ուր տեղ, ուր իրկան մօտ : Ախշիկ ուր քիւրք ինան թուրն առցկեց իթալ, ասաց՝ «է՛լ վախ չունեմ ոչ մէյ մարդուց» : Ախշիյ նո՛ր ինկիւաւ աշխար՛, նոր կեանք արաց, խանգիստ օր տէսաւ : Գիր մ՛ գիրրեց էօրէօխկեց ուր խօր . գիրլիտուց ընցածներ զըմէն պատմեց . խէրն էլ գիր մ՛ գիրրեց ճամխեց ուր ախշկան եւ ուր խնամի թակաւուրուն, ուրենց խնամութէն շնորհա- ւորեց, խանգիստ կեանք արին :

Աստուց իրեյ՛ ինճիոր էճաւ, մէյն ա- սողաց, մէյ լսողաց մէյն էլ ախանջ արողաց :

Պարիս : Գրի առաւ ՉիթՈՒՆԻ



ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻ ԳԵՕՄԻՆԻՐԺԵՆ
ԿԵՆՆԵՆ ԵՒ ԳՐԵԿԱՆ ԳՈՐԺՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն :)

4. ԵՐԵՄԻԱՅԻ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՆԵՐԸ

Երեմիա Չէլէպի գրական բեղուն գոր- ծունէութիւն մ՛ունեցաւ : Դժուար է այժմ կազմել ամբողջական ցանկ մը այն ամէն ըն- դարձակ եւ մանր գրուածներու, որոնք ար- գիւնքն եղան այդ գրասէր եւ ժիր հեղինա- կին : Անոնք սակաւ թուով տարածուժ գտած են . ըստ մեծի մասին գրուած եւ պահուած

են հեղինակին սեպհական մատենադարանին մէջ եւ անոր մտերիմներու, ինչպէս Ապրոյեան զերդաստանի քով : Պատմական գրուածնե- րու մէկ ցուցակը տեսած եմ հեղինակին շա- րագրած «Հարցմունք եւ պատասխանիք» աշ- ըրուածքին մէջ (Չեռ . էջմ . Թ . 72), ուր խառութեան մէջ (Չեռ . էջմ . Թ . 72), ուր ինքիպայցնէ ինք զինքը հայ պատմագիր- ներու թուին մէջ . դժբախտաբար օրինակու- թիւնս մնացած է Երեւան, որով պիտի չկա- րենամ զայն ծանօթացնել ընթերցողներու :

Ապրոյեանց Մատենադարանը կ'երեւայ թէ ունեցած է իւր մէջ Երեմիայի գրուած- ներէն մեծ թիւ մը . Ջրպետ իւր Recherches curieuses sur l'histoire ancienne de l'Asie գրուած- քին մէջ թուելով Երեմիայի աշխատութիւն- ները կը գրէ . Ces ouvrages se trouvent en ori- ginal dans la bibliothèque de MM. Abro, Ar- ménians, à Smyrne . Թէ Երեմիայի ձեռագիր- ները վաղ ժամանակներէ ի վեր կը գտնուէին Ապրոյեանց քով, կ'ակնարկէ ինքնին Երե- միա, յիշելով իւր գրուածքն յԱպրօ Չէլէպի . «Թէ կամ լիցի քեզ առնուլ զճաշակ պատ- ճառի, գիրի մերում Դպրարանի, գորոյ միայն օրինակն զոր ասացի կայ առ Պր . Չէլէպին» : Թէ ի՞նչ ճակատագիր ունեցաւ Ապրոյեանց

մատենադարանը Չիլէպիոյ մեծ աղէտէն հաջորդեալ, չեմ կրնար ըսել : Հ . Գ . Գալէմքեա- րեան տեսած էր իւր 25 տարի յառաջ Ապրոյեանց երկրորդ ճիւղին քով ի Կ . Պոլիս, Երեմիայի երկու գրութիւնները՝ Վիպասա- նութիւնն յԱպրոյ Չէլէպի եւ Աւետարանի Յիշատակարանը : Այդ գրութիւններէն առաջ- նոյն պատահած եմ ես 1930ին ի Լայպցիկ նոյն պատահած եմ ես 1930ին ի Լայպցիկ հար զայն ի Պարիս . իսկ այս վերջին քաղաքին մէջ Պր . Յովհ . Զաւրեանի քով տեսած եմ Երեմիայի ուրիշ մէկ գրութիւնը՝ Կոնդակն Կրեակէի Եկեղեցւոյն, որ նոյնպէս Ապրոյեանց նուիրուած՝ կը կազմէր առաջնոյն անբաժին ընկերը : Կը հետեւցնեմ ասկէ, թէ Ապրոյեանց Մատենադարանն ի Պարիս ի վաճառ հա- նուած է :

Ուրիշ խումբ մը Գեօմիւրճեան ձեռա- գիրներու հասած է Վենետիկ, Միխիթարեան Մատենադարանը . Հ . Մ . Զամբեան¹ թուե- լով Երեմիայի 6 գրութիւնները, կը ծանու- ցանէր «գրուածք Երեմիայի ըստ մեծի մա- սին անկան ի ձեռս մտերիմ ծանօթի նորա

ճէվահիրճի տիրացու Մաղաքիայի»² : Իսկ Թէմուրիւեան կ'աւելցնէ . «Եւ զայս ամենայն ունիմք առ մեզ (Ի Ս . Ղազար) գրչութեամբ ձեռին նորա : Ուրեք ուրեք տեսանի եւ ձեռա- գիր Մաղաքիայ զպրի մտերիմ բարեկամի նորա, առ որում մնացին այս գրուածք սորա յետ մահու նորին Երեմիայ : Եւ ապա միջ- նորութեամբ թողին նորա, Հ . Յարութիւն վարդապետին՝ միոյ ի միարանից ուխտիս մերոյ, եւ հօրեղբորն իմոյ ըստ մարմնոյ, հա- սին այս ամենայն գրուածք ի վանս մեր» :

«Բացի Ս . Ղազար գտնուած աշխատու- թիւններէն, մեծ մաս մըն ալ, իր իսկ ձեռ- քովը գրուած, կը պահուին այժմ Երուսա- ղէմի Ս . Յակոբեանց Միաբանութեան Մա- տենադարանը»³ : Այս գրուածքներու համա- տոս ցուցակը տուած էր արդէն Մեսրոպ եպ . Նշանեան Թորգոմեանի աշխատութեան մէջ⁴ . իսկ ընդարձակը բարեհաճեցաւ զնել արա- մադրութեան տակ ին ք ն ա բ ե բ ա բ ր (3 Դեկտեմբեր 1932), ուր գտայ մանրամասն ցուցակագրուած Երեմիայի մանր եւ մեծ աշ- խատասիրութիւնները, տեղ տեղ նաեւ ըն- դարձակ յառաջբերութիւններով : Թէեւ յօ- դուածս շարուած էր արդէն եւ յանձնուած մամուլին, բայց ամբողջական ընծայելու հա- մար ցուցակս, հարկ համարեցայ նոր խմբա- գրութեան ենթարկել ամբողջը, օգտուելով ստատօրէն Մեսրոպ Սրբազանի անչափ բա- րութեանէն : Իմ սրտագին շնորհակալութիւնս Սրբազանին այս ազնուաբար շնորհին համար . վստահեմ թէ ինճ հետ նաեւ հայ բանասիրու- թիւնը երախտապարտ պիտի մնայ Սրբազա- նին բարեացակամութեան :

Ուսումնասիրութեան մէջ ուր խօսք կ'ըլլայ Երուսաղէմեան ձեռագիրներու վրայ, տեղեկութիւնները կը պարտիմ Մեսրոպ Սրբազանի ներկայացուցած ցուցակին :

Ինչ ինչ աշխատութիւններ, հաւանօրէն ընդօրինակութեամբ, հասած են նաեւ էջ- միածին . գորոնք ցուցակագրած եմ :

Ես պիտի ջանամ ի մի հաւաքել հոս այն ամէն գրուածքները, որոնք որ եւ իցէ կեր- պով ծանօթութեանս հասած են, թողլով ժա- մանակին լրացնել պակասները, յատկապէս ճշգիւ խորագիրները :

1. Պ ա տ մ ու թ ի ո ճ հ ա մ ա ո ս չ ո .

² Թորգոմեան, 732—733 :
³ Անդ, էջ 733 :
⁴ Անդ, էջ 734—73 :

¹ Զամբեան, Գ . 723 :